

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

## ք. Երևան Խորհրդի անդամներ՝

Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, նախագահ
Ք. Ղալեջյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)
Վ. Դավթյան	ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Իսախրյան	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Վ. Ղազարյան	ՀՀ ոստիկանության պետ
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Գ. Շախբազյան	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ս.թ. փետրվարի 7-ին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, Խորհրդի նախագահ Գ. Սանոսյանի կողմից հրավիրվել է Խորհրդի նիստ հետևյալ օրակարգով.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ստեփան Մաչյանի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի նոր գործադիր տնօրենի ընտրություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Խորհրդի նախագահի կողմից Խորհրդի քարտուղար նշանակվեց Քրիստինե Ղալեջյանը:

Համաձայն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

**1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ստեփան Մաջանի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին:**

**Քվեարկության արդյունքում 10 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝**

- 1) Ընդունել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ստեփան Մաջանի դիմումը:
- 2) Դադարած համարել Ստեփան Մաջանի՝ որպես «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի լիազորությունները՝ 2022 թվականի փետրվարի 7-ից:
- 3) Հանձնարարել Ստեփան Մաջանին և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի համապատասխան ստորաբաժանմանը կազմակերպել հանձնման ընդունման գործընթաց և հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնել Խորհրդին:

**2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի նոր գործադիր տնօրենի ընտրություն:**

Խորհրդի նախագահի կողմից առաջադրվեց Գոռ Ավետիսյանի թեկնածությունը «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնում:


**Քվեարկության արդյունքում 10 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝**

- 1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն ընտրել Գոռ Ավետիսյանին և կնքել աշխատանքային պայմանագիր:
- 2) Լիազորել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի առաջատար իրավաբան Նելլի Հովսեփյանին իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարելու գործադիր տնօրենի փոփոխություն:


Խորհրդի նախագահ՝

 Գ. Սանոսյան


Խորհրդի քարտուղար, անդամ՝

 Բ. Ղալեջյան

Անդամներ՝

 Վ. Դավթյան

 Ա. Ավանեսյան

 Ա. Ղուլարյան

 3

Վ. Ղազարյան



Ս. Թովմասյան



Գ. Շախբազյան



Ա. Իսախիրյան